Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1304[2]-03.04.2026-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «եւ 34-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14.1-ին եւ 18-րդ հոդվածների 1-ին մասերում «, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի 1-ին» բառերը փոխարինել «եւ 24-րդ հոդվածի 3-րդ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) «գ» կետում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.

2) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը «աշխատանքից» բառից հետո լրացնել «(սույն կետով նախատեսված սահմանափակումը չի արգելում համայնքային ծառայողին դառնալ խնամատար ծնող եւ ստանալ խնամատար ծնողի համար օրենսդրությամբ սահմանված վարձատրություն)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 34-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում «, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի» բառերը փոխարինել «եւ 24-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերով:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրացած եւ ծառայության ժամկետը մինչեւ մեկ տարով երկարաձգված համայնքային ծառայողների վրա:

3. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ եռամսյա ժամկետում:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1304[2]-03.04.2026-ԱՍ-011

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «եւ 34-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14.1-ին եւ 18-րդ հոդվածների 1-ին մասերում «, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի 1-ին» բառերը փոխարինել «եւ 24-րդ հոդվածի 3-րդ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) «գ» կետում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.

2) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը «աշխատանքից» բառից հետո լրացնել «(սույն կետով նախատեսված սահմանափակումը չի արգելում համայնքային ծառայողին

դառնալ խնամատար ծնող եւ ստանալ խնամատար ծնողի համար օրենսդրությամբ սահմանված վարձատրություն)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 34-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում «, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի» բառերը փոխարինել «եւ 24-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերով:

Հոդված 9. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրացած եւ ծառայության ժամկետը մինչեւ մեկ տարով երկարաձգված համայնքային ծառայողների վրա:

3. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304-03.04.2026-ԱՍ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[1]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[2]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[3]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[4]-03.04.2026-ԱՍ-011/1), «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[5]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[6]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[7]-03.04.2026-ԱՍ-011/1), «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[8]-03.04.2026-ԱՍ-011/1), «ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1304[9]-03.04.2026-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	• «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ		Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված. • «Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված. • «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված. • «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված. • «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդված. • «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության	մասում սահմանված պահանջը, որի համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի, առաջարկվում է հանել՝ • «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրը. • «Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի վերնագիրը. • «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրը. • «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու		

		մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված. • «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված.	մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը. • «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը. • «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրը. • «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը:		
2.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու		Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետ	մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետը «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկվում է լրացնել «նորմատիվ իրավական» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը:		
3.	Կառավարություն	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկվում է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով այն, որ նախագծի 2-րդ հոդվածով կատարվում են երկու փոփոխություններ:		Ընդունվել է:
4.	Կառավարություն	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետը «ապա» բառից հետո առաջարկվում է լրացնել «, սույն օրենքի ուժի մեջ		Ընդունվել է:

			մտնելուց հետո,» բառերով՝ հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով:		